Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 28.12.2023 թվականի «2024 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 334-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2024 թվականի համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխությունը պայմանավորված է աշխատանքային գործընթացում առաջացած մի շարք խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

05,04,2024 թվականի Մասիս համայնքի ավագանու թիվ 73-Ա որոշմամբ «Մասիս համայնքի բնակչության հատուկ սպասարկում և համայնքային ենթակառուցվածքների սպասարկում» ՀՈԱԿ-ին հատկացված գրեյդերի տեխնիկական սպասարկման, ինչպես նաև ԳԱԶ 31 02 մակնիշի ավտոմեքենայի ընթացիկ նորոգման համար անհրաժեշտ է ՀՈԱԿ-ին հատկացվող սուբսիդիայի չափն ավելացնել 1 500,0 հազար դրամով:

Համայնքում առաջացած առաջնահերթ խնդիրներին լուծում տալու համար անհրաժեշտ է ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ դասակարգմամբ նախատեսված ընթացիկ նորոգման ծախսերն ավելացնել 15 000,0 հազար դրամով:

Հորդառատ անձրևներից հետո Մասիս քաղաքում և գյուղերում ճանապարհներին առաջացել են ընթացիկ նորոգման աշխատանքների անհրաժեշտություն, որի համար բյուջեում ճանապարհների ընթացիկ նորոգման համար նախատեսված միջոցներն անհրաժեշտ է ավելացնել 2 900,0 հազար դրամով:

Համայնքի մի շարք բնակավայրերում արտաքին լուսավորության ցանցի մալուխները կտրտված և մաշված են, որն էլ հաճախ անջատումների պատճառ է հանդիսանում: Հաշվի առնելով այս հանգամանքը, անհրաժեշտ է մալուխները փոխարինել նոր՝ ՍԻՊ տեսակի մալուխներով, ընդհանուր 8000 գծամետր: Հին մալուխների ապամոնտաժումը և նորերի անցկացումն իրականացնելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 8 000,0 հազար դրամ:

Համայնքապետարանի և վարչական նստավայրերի աշխատասենյակներն անհրաժեշտ գույքով լրացնելու համար անհրաժեշտություն է առաջացել բյուջեում նախատեսել 10 000,0 հազար դրամ:

Համայնքի մի շարք գյուղերում դեռևս առկա են արտաքին լուսավորության ԴՆԱՏ տեսակի լուսատուներ, որոնց էլեկտրոէներգիայի ծախսն ավելի շատ է, ուստի առաջարկվում է նշված լուսատուները փոխարինել նոր, ԼԵԴ տեսակի լուսատուներով: Ընդհանուր անհրաժեշտ է 1100 հատ լուսատու: Առաջարկվում է նշված քանակը ձեռք բերել փուլերով: Առաջին փուլում լուսատուների ձեռք բերման համար անհրաժեշտ է 5 000,0 հազար դրամ:

Համայնքային մի շարք ծրագրերի իրականացման համար նախորդ տարիներին ձեռք բերված նախագծանախահաշվային փաթեթներով կատարվել են գնման գործընթացներ, որոնց արդյունքում կնքված պայմանագրերով աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել ընդհանուր 10 113,0 հազար դրամ, որից՝

- Նոր Խարբերդ բնակավայրի երաժշտական դպրոցի ճակատային մասի լուսային ձևավորման աշխատանքներ 1 600,0 հազար դրամ
- Նոր Խարբերդ բնակավայրի 1-ին փողոցի թիվ 2 և 3 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքների համար 8 513,0 հազար դրամ

Նոր Խարբերդ բնակավայրի մանկապարտեզի տանիքի ընդլայնման և միջնապատերի կառուցման աշխատանքների համար կազմակերպվել է գնման ընթացակարգ 300,0 հազար դրամ արժեքով, սակայն հայտարարվել է չկայացած, ոչ մի հայտ չներկայացնելու հիմքով: Հաշվի առնելով վերոգրյալը, և հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը, անհրաժեշտ է բյուջեի համապատասխան տողի միջոցներն ավելացնել 300,0 հազար դրամով:

UNICEF կազմակերպությունը հանդես է եկել համագործակցության առաջարկով, այն է ֆինանսավորել Մասիս քաղաքի թիվ 5 մսուր մանկապարտեզի խմբասենյակի և ֆիզկուլտուրայի դահլիճի վերանորոգման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում համայնքը պարտավոր է ձեռք բերել փորձաքննություն անցած նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթ, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 550,0 հազար դրամ:

Նոր Խարբերդ բնակավայրի «Մորենիկի» փողոցը գտնվում է անմխիթար վիճակում: Փողոցը հիմնանորոգելու համար պետք է ձեռք բերել փորձաքննություն անցած նախագծանախահաշվային աշխատանքներ, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 660,0 հազար դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

հ/հ	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Վարչական մասի Ծախսեր*	*Ֆոնդային մասի Ծախսեր*	
				Ծախսեր				
1	**01**	**1**	**1**	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Վարչական սարքավորումներ	5122		10000,0	
2	**01**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.**ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	-27400,0		
3				Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	4251	15000,0		
4				Սուբսիդիա «Բնակչության հատուկ սպասարկում և ենթակառուցվածքների սպասարկում» ՀՈԱԿ-ին	4511	1500,0		
5				Վարչական սարքավորումներ.	5122		-26623,0	
6	**04**	**5**	**1**	**Ճանապարհային տրանսպորտ.** Ճանապարհների ընթացիկ նորոգում	4251	2900,0		
7				Նախագծանախահաշվային աշխատանքներ /Նոր Խարբերդ	5134		600,0	

				բնակավայրի «Մորենիկ» փողոցի հիմնանորոգման/				
8				փորձաքննություն	5134		60,0	
9	**06**	**1**	1	**Բնակարանային շինարարություն.** Նոր Խարբերդ բնակավայրի 1-ին փողոցի թիվ 2 և 3 շենքերի բակերի բարեկարգում	5113		8513,0	
10	**06**	**4**	1	**Արտաքին լուսավորություն.** Համայնքի արտաքին լուսավորության ցանցի վնասված մալուխների ապամոնտաժում և նորերի անցկացում	4251	8000,0		
11				Նոր Խարբերդ բնակավայրի երաժշտական դպրոցի ճակատային մասի լուսային ձևավորման աշխատանքներ	5113		1600,0	
12				Լեդ լուսատուներ	5122		5000,0	
13	**09**	**1**	**1**	**Նախադպրոցական կրթություն.** Թիվ 5 մ/մ ՀՈԱԿ-ի խմբասենյակի և ֆիզկուլտուրայի դահլիճի վերանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		500,0	
14				փորձաքննություն	5134		50,0	
15				Նախագծանախահաշվային աշխատանքներ /Նոր Խարբերդ բնակավայրի մանկապարտեզի տանիքի ընդլայնման և միջնապատերի կառուցման աշխատանքների/	5134		300,0	
						0,0	***0,0***	
				Ընդամենը				

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի լինի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ